

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԻԿԱԿԱՆ ԽՈՐՉԴԱՏՎԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔ

ԿՅ



477

ՏԵՂԵԿԱԳԻՐ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ  
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

1928—1929 թ. թ.

614.88  
Z-24

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽԱՉԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ

20 JUL 201

614.38  
Z-24

ՏԵՂԵԿԱԳԻՐ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ  
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

1055

1928—1929 թ. թ.



1930

63 . 86. 213

Առաջին տեղեկագրի մեջ մենք ամփափում ենք Հ. Կարմիր Խաչի Բնիկ-  
բուրյան գործունեյությունը 1928 և 1929 թվերին:

Հազվեշրջանի ընթացքում Հայաստանի Կարմիր Խաչի Գլխավոր  
պարչությունը շարունակել է իր գործունեյությունը նույն հիմնա-  
կան գծերով, ինչպես և նախորդ տարիներում, հետապնդելով այն նը-  
պատահները, վորոնք առաջարկում են Կարմիր Խաչի կանոնադրու-  
թյամբ և վորոնք բզիսում են յերկրի հրատապ պահանջներից:

Գլխավոր Վարչության և Նախագահության, ինչպես և Վերսատ-  
ուիչ Հանձնաժողովի կազմը 1928 թվին մնացել է նույնը և վոկուբու-  
թյան և յենթարկվել միայն տարվա վերջում Հ. Կ. Խաչի Հանրապե-  
տական Համագումարից հետո, վորը տեղի ունեցավ գեկումբերի  
16—18-ին, և վորն ընտրեց զեկավար մարմինների նոր կազմ, այն և՝  
Գլխավոր Վարչություն, բաղկացած 25 անդամից և 7 փոխանդամնե-  
րից և Վերսատուղիչ Հանձնաժողով՝ 3 անդամից և 2 փոխանդամից:

Այդ մարմինների կազմը տալիս ենք վերջում:

ՀԱՅՈՒՆԻԳՐԱՄԻ ՏՊԱՐԱՆ  
ՊԱՏՎԵՐ 2875  
ԳՐԱՌԵՊԳԼԽՎԱՐ 5313 (Բ)  
ՏԻՐԱԺ 1000

10329.58

Գլխավոր վարչության պլենումները

Նորընտիր Գլխավոր Վարչությունը հազվեշրջանում ունեցել է յե-  
րեք պլենար նիստ: Առաջին պլենար նիստում 19 գեկանմբերի 1928 թ.,  
Գլխավոր Վարչությունը ընտրել է նոր նախագահություն բաղկացած  
7 անդամներից հետեւյալ կազմով.

Նախագահ՝ Բժ. Ս. Կամսարական: Փոխանախագահներ՝ բժ. Հ.  
Զայրաբյան, Արամ Կոստանյան, պատասխանատու քարտուզար՝ բժ.  
Մ. Մանթաշյան, գանձապահ՝ բժ. Փ. Հակոբյան: Անդամներ՝ բժ. Կ.  
Մարգարյան և բժ. Բ. Աստվածատրյան:

Նախագահության անդամի թեկնածու յե ընտրվել ՊԱԶԲ-Ավելիու-  
մի ներկայացուցիչը:

Գլխավոր Վարչության 2-րդ պլենումը կայացել է 1929 թվի մար-

մի 29—30-ին : Պլենումը զբաղվել և Հ. Կարմիր Խաչի գործումներում թիշտ պերաբերյալ մի շարք խնդիրներով և ընդունել և մի բանաձև՝ թիշտ պերաբերյալ մի շարք խնդիրներով և ընդունել և մի բանաձև՝ պորով առաջարկում և նախագահությանը . 1. Առանձին ույժ տու անդամագրությանը, մասնավորապես բանվորության, կարմիր բանակայինների և չքավոր գյուղացիության ըրջաններում, և այդ նպատակայինների և չքավոր գյուղացիության ըրջաններում, և այդ նպատակայինների և չքավոր գյուղացիության ըրջանների և անդամագրությանը . 2. Առանձին ույժ տու անդամագրությանը 1 ոռորդի : 2. Շարունակել լայնացնել առաջին ողնության խմբակների ցանցը բանվորական և գյուղական վայրերում : 3. Ամեն կերպ աշխատել Գավորներին և Արշակության միջոցով կապել տեղերում գործող բժիշկներին այդ խմբակների աշխատանքների հետ : 4. Միջոցներ ձեռք առնել առաջիկա բյուջետային տարվանից հիմնարկների մի մասը հանձնել տեղական գործկոմներին և ազատված միջոցների հաշվին բանալ նոր հիմնարկներ : — Բացի դրանից, պլենումը հաստատում է Կարմիր Խաչի բյուջեն 1929 թվի համար 180·000 ռուրլի մուտքի և 314·000 ռուրդախքի մասերով :

3-րդ Պլենումը կայացավ նույն թվի գեկտեմբերի 6—8-ը : Պլենումը նախ աչքի առաջ ռանենալով, վոր Գլխս. Վարչության և նախագահը նախագահության կաղմից մի քանիսը հեռացել են, այն և փոխնախագահաներ՝ Հ. Զալադյանը, Ա. Կոստանյանը և անդամ թժ. Խ. Մարգարյանը, վորոշեց նրանց փոխարեն հրավիրել կոպտացիայի կարգով Գլխակաց վարչության մասնամբ ընկ. ընկ. Մ. Զալյանին, կ. Ծովյանին և թժ. Կիբանելին և ընտրել առաջին յերկուսին փոխնախագահի, իսկ յերրորդին նախագահության անդամի պաշտոնով : Դրանցից ընկ. կ. Ծովյանին նախագահությունը դեռ նույն 1929 թվի գեկտեմբերի 16-ի նիստում վորոշել եր կոպտացիայի կարգով հրավիրել Գլխ. Վարչության անդամ և ընտրել պատասխանատու քարտուղարի պաշտոնով հրաժարված ընկ. Մ. Մանթաշյանի փոխարեն :

Այս Պլենումը լսեց նախագահության գեկուցումը 1929 թ. տարած աշխատանքների մասին, նրա Փինանսական գեկուցումը, Ենթաճնի և ինքնականի մասնաճյուղերի Վարչությունների գեկուցումները և ուր գեկուցումների առթիվ ընդունեց համապատասխան բանաձեւեր : Նախագահության գեկուցման առթիվ ընդունված բանաձեւի մեջ Պլենումը՝ մատնացույց անելով տարվա ընթացքում նախագահության կատարած աշխատանքների վորոշ բացերը՝ հրավիրում և նախագահությունն առաջիկայում առանձին ուշք դարձնել հետեւյալ անելիքների վրա :

1. Կազմակերպել մասնաճյուղեր այն գավառներում կամ ըրջաններում, վորոշել այդպիսիներ զեռ չեն կազմակերպված և ուղղակի կառ հաստատել այն ըրջանային մասնաճյուղերի հետ, վորոնց պետք չեղած չափով չեն գեկավարում գավառային մասնաճյուղերը :

2. Ուժեղացնել կարմիր Խաչի բջիջների կազմակերպումը և անդամագրությունը և հասցնել մինչև 1930 թ. վերջը գույ պակաս քան 30·000 :

3. Ուժեղացնել առաջին ողնության խմբակների աշխատանքների ղեկավարությունը և աշխատել, վորպեսի նախատեսված ծրագիրը 50 խմբակի մասին լրիվ կերպով իրագործիլ :

4. 1930 թվին կազմակերպել 2 գրութինա, առանձին ուշադրություն գրաններով բանվորական վայրերի վրա :

5. Սոցիալական հիվանդությունների գեմ պայքարի գործում ավելի ուժեղացնել պրոֆիլակտիկ աշխատանքները :

6. Մի շարք խորհրդային և կոլեկտիվ անսեռություններում բանակական հրապարակներ, բաց մասունքը և կոնսուլտացիաները :

7. Լայնացնել պիոներների համար տարվա աշխատանքները, ընդգրկելով ըստ հնարավորության նաև մյուս գավառների պիոներների առողջության սպասարկումը :

8. Հրահանգել բոլոր մասնաճյուղերին կ. Խաչի աշխատանքների ուժեղացման համար լայն կերպով ոգտագործել սոցիալիստական մրցման մեթոդը բոլոր ասպարեգներում :

9. Անմիջապես անցնել հնգամյա պլան կազմելու աշխատանքին :

Նախագահության նիստերը մասնակիությունը և անդամագրությունը

բյուջե

1928 թվին Հ. կ. Խաչի նախագահությունը (հին կաղմով, մինչև 16 գեկանը բյուջերի) ունեցել է 11 նիստ, վորոնց միջոցին քննության և առնվել 74 ինդիք:

Նոր կազմով նախագահությունը 1928 թ. ունեցել է միայն մեկ նիստ գեկանը բյուջերի 27-ին, իսկ 1929 թվին 20 նիստ : Այդ նիստերի միջոցին քննության են առնվել 106 ինդիք:

Հ. կ. Խաչի մասնաճյուղերի թիվը յերկում հաշվեցը անում ավելացել է 10 նոր մասնաճյուղերով շրջանային վայրերում, այն և նախագահության նախագահադրում, Արագայունում, Աւանդիրում, Արփայում, Սիսիանում, Դիլիջանում, Դամարլում և Սևագանում (Յելենովկա), այսպիսով մասնաճյուղերի թիվն այժմ հասնում է 19-ի :

Հաշվեցը նիստում Պիլսակոր Վարչությունն առանձին ջանքեր և գործադրել ավելի և ավելի մասսայականացնելու կարմիր Խաչի պարծունակությունը, ներզրավելով նրա կազմի մեջ լայն աշխատավորական զանգվածները : Մինույն ժամանակ Վարչությունն աշխատա

տել և կապեր հաստատել և համագործակցել ըրջաններում զործող բոլոր պետական, հասարակական, արհեստական և այլ մարմինների հետ, և այդ ուղղությամբ հրահանդներ և տվել իր բոլոր մասնածյուղերին։ Խոկ քաղաքում անդամագրությունն ուժեղացնելու համար Վարչությունն աշխատել է կազմակերպել Հ. Կարմիր Խաչի բնիկներ թե՛ յերկաթգծի և թե՛ բոլոր աչքի ընկնող հիմնարկների կովեկտիվներին կից, նախապես զեկուցումներ տալով կ. Խաչի գործունեյության ու նշանակության մասին։ Շնորհիվ զործ դրած ջանքերի շ. կ. Խաչի անդամների թիվը 1928 թվի վերջին յեռամսյակում արդեն հասել եր 12.000-ի, վորից մոտ 2.200 հոգի Յերեան քաղաքում, մնացածը գովանեներում։ 1929թ. ի կատարումն Համագործարի վորոշման, Վարչությունը նշանակել է հատուկ հրահանդիչ անդամագրություն ավելի մեծ թափով առաջ տանելու համար։ Յերեան քաղաքում Կարմիր Խաչի բնիկների թիվը՝ տարվա վերջին հասնում էր 56, իսկ զավառային և ըրջանային կենարուններում— 62։ Գյուղական վայրերում կազմակերպման գործին ձեռնարկված ե-միայն վերջին տմբոններ։ Բացի դրանից կան նաև 4 բնիկներ յերկաթգծի վրա։ Կարմիր Խաչի անդամների թիվն առ 1-ի հունվ. 1930 թ. հասնում էր մոտավորապես 18.000, վորից մինչև 4.000 անդամ Յերեան քաղաքում։ Անդամների սոցիալական կազմը մոտավորապես հետեւյալն է. գյուղացիք— 62 տակոս, ծառայողներ— 20 տակոս, բանվորներ— 10 տակոս, ուսանողներ— 5 տակոս, այլ— 3 տակոս։ Ազգային կազմը— 95 տակոս հայ, 5 տակոս ուսուական թյուրք։

**Արտասահմանյան հայության ուժանդակ-  
կությունը**

Արտաստհմանի հայության վերաբերմամբ Գլխավոր Վարչությունը վորոշել է պահպանել և ավելի ուժեղացնել իր կատերն այստեղ ունեցած իր մասնաճյուղերի հետ, այն եւ՝ Ամերիկայում, Ֆրանսիայում, Բելգիայում, աշխատելով ամեն կերպ ծանոթացնել նրանց մեր յերկրում կատարված աշխատանքների հետ, իրազեկ պահելով նրանց մեր կարիքներին և առաջ բերել նրանց գործոն ոժանդակությունը ։ Կարմիր Խաչին Բայցի գրանից վերջին շրջանում ։ Կ. Խաչի Գլխավոր Վարչությունը հրավիրել է արտասահմանում գտնվող իր մասնաճյուղերի ուշադրությունը նաև Կարմիր Խաչի անդամագրությունն իրենց ըրչաններում ուժեղացնելու և Կարմիր Խաչի նպատակներն ավելի ժամանականացնելու վրա։ 1929 թվի վերջում Կարմիր Խաչի նոր մասնաճյուղ է կազմակերպվել Հունաստանում։

Բացի իր արտասահմանյան մասնաճյուղերից Հ.Կ. Խաչի Գլխական վարչությունը սերտ կապեր եւ պահում նաև Հայոց Բարեկործական հանդհանուր Միության հետ, զորի վարիչ մարմինը դանիւմ է

Գորիի մասին միջնորդ է Կարմիր Խաչի Վարչությունը՝ Հաջողակցությունը և այլ շաբաթ խոչու նվիրատվություններ՝ Հայաստանում Հիմնադրանոցներ և այլ հիմնարկներ կառուցելու համար, ինչպես Դարուճի Հակոբյանի անվան մանկարժական հիմնադրանոցը, Մարի Նուռաբի անվան ակնաբուժական կլինիկան և այլն:

Առանձնապես պիտք է հիշատակել այսուել Մանկաբուժարանի հանգանակության խնդիրը, վորը բացված է Ամերիկայում։ Այդ հանգանակությունը ձևոնարկիված էր 1925 թվին հատուկ հանձնախմբի ձեռքով Ա. Գարագյանի նախազահությամբ, և նրա սկզբնական կային հետագայում աչքի առաջ ունենալով, վոր Հայաստանում արգելն սպասակն էր Մայրանոց-հիվանդանոց կառուցել Հայաստանում։ Սակառուցվում է Դարուհի Հակոբյանի անվան Մայրանոց, Հ. Կ. Խաչի Գլխավոր Վարչությունը գետ 1927 թ. պատճառաբանված միջնորդության եր հարուցել հիշալ Հանգանակից Հանձնախմբի առաջ, խնդրելով հանգանակության գումարը հատկացնել Յերեսնում Մանկաբուժարան կառուցելու գործին, վորի կարիքը շատ զգալի յէ։ Հանձնաժողովը այնքան էր իր համաձայնությունը։ Հանգանակության սահմանված գումարն էր 50.000 դոլար։ Մինչև այժմ հանգանակիված է մոտ 32.000 դոլար, հանգանակությունը շարունակվում է, իսկ հանգանակած դրսմն արգելն փոխադրված է Հ. Կարմիր Խաչի Վարչությանը։

կա և մի ուրբէց նվիրատվություն, ստացված արտասահմանից չ-  
եալմիր կազի տրամադրության տակ: Դա Բելգիաբնակ Տ. Զամքերունի  
նվիրած 20.000 ֆրանկն եր, մեր դրամով 1771 ոռութիւն, վորով համա-  
ձայն նվիրատուի ցանկության պիտի կառուցվեր թժշկակայան Նոր-  
Յեղուսկիա գյուղում: Սակայն աչքի առաջ ունենալով, վոր Նոր-Յեղ-  
ուսկիայի բնակիչները ցանկություն ունեն փոխել իրենց բնակավայրը,  
այդ թժշկակայանի շենքի կառուցումը վորոշված ե հետաձեւ մինչեւ  
Նոր-Յեղուսկիայի վայրի խնդիրը վերջնականապես պարզվի: Այս առ-  
թիվ սրեաք ե ամելացնել, վոր նկատի ունենալով, վոր յեղած գումա-  
րը բարկան չի առաջարգաված նպատակով հարժար չենք կառուցելու  
համար, նվիրատուն պատրաստակամություն և հայտնել նվիրել նույն  
նպատակով գարճար 20.000 բելգիական ֆրանկ:

Գառլ Միջազգային կարմիր խաչի ուսու

Բացի զուտ հայկական կաղմակերպություններից չ. կ. կաշն արտասահմանում կապեր ե. պահպանել նաև մի քանի ստար կաղմակերպությունների հետ, այն ե. 1. Կարմիր Խաչի Միջազգային Կոմիտեյի հետ, վորք գտնվում ե. Փընկում և 2 Կարմիր Խաչի Բնկերությունների Լիգայի հետ, վորք Վարչությունը գտնվում է Պարիզում։ Այդ յիրկու կաղմակերպությունները 1928 թվին գալով վորոշ համաձայնության, մշտիկցին ընդհանուր կանոնադրություն, վորք հաստատվեց


նույն թվի հոկտեմբերին Հասդայում հրավիրված 13-րդ Միջազգության կոնֆերանսի կողմից։ Այդ կոնֆերանսին առանձին պատճաժամփությունը մասնակցում էր և Խորհրդային Միության Կարմիր Խուցի և Կարմիր Մահմետի Ընկերությունների Միության Գործադիր Կոմիտան։ Հայաստանի Կարմիր Խաչն ևս իրեն այդ Միության անդամ ունեցավ իր մասնակցությունն այդ կոնֆերանսում, նախորոք պատրաստելով և ներկայացնելով նրան Համառոտ զեկուցադիր իր զործունելության մասին, վորը և լույս տեսալ թե՛ առանձին բրոցյուրով և թե՛ կոնֆերանսի ընդհանուր աշխատանքների մեջ։ Ներկա 1930 թվին Հոկտեմբերի 6—11-ին Բյոյուսունում կայանալու յե Կարմիր Խաչի 14-րդ Միջազգային կոնֆերանսը, վորին մասնակցելու համար Հայաստանի կարմիր Խաչը նույնպես հրավեր և ստացել։

Մասնակցություն արտասահմանյան  
ցուցանախնեներին

Արտասահմանի մասին խոսելիս պետք է հիշատակել այստեղ և այն ժամանակցությունը, վոր Հ. Կարմիր Խաչն ունեցել և արտասահմանում կազմակերպվող ցուցահանդեսներին։ Նախ՝ 1929 թ. սկզբներին Հ. Կարմիր Խաչը մասնակցեց այն ցուցահանդեսին, վորը կազմակերպել էր Միութենական ՅՈԿՍ-ը (Կուրտուրական Կապի Համամիութենական Ընկերություն) Ծվեյցարիայի մի քանի քաղաքներում։ Սահմանով 1928 թ. գեկտեմբերի սկզբին Հ. Կարմիր Խաչի Ծվեյցարիայի ներկայացուցիչ Ս. Բագոցկուց, ինչպես և Կարմիր Խաչի և Կարմիր Մահմետի Միության Գործկոմից տեղեկություն հիշյալ ցուցահանդեսի վերաբերմամբ, Հ. Կարմիր Խաչի Գլխավոր Վարչությունը պատրաստեց և ուղարկեց Բերն գովառը Բողոցկում մի շաբթ նյութեր ցուցահանդեսի համար, այն ե՛ դիագրամմաներ Հ. Կարմիր Խաչի Հիմնարկությունների գործունեյության մասին, լուսանկարներ և ալբոմներ Կարմիր Խաչի Հիմնարկներից, մի հատուկ ալբոմ «Վերականգնվող Լենինականը» անունով, Հայաստանի քարտեզը, վորի վրա նշանակված Էն Հ. Կարմիր Խաչի Հիմնարկները, միենում ժամանակ նաև վիճական տվյալներ Կարմիր Խաչի անդամների թվի և բյուջեյի վերաբերմամբ։

Ինչպես հետո Հաղորդել և Գլխավոր Վարչությանը մեր ներկայացուցիչ դր. Բոգոցկին, բոլոր ուղարկված նյութերը ստացվել են ժամանակին և ոգտագործվել են ցուցահանդեսի համար, վորը կայացել է 1929 թ. մարտ ամսի ընթացքում և ունեցել է Հաջողություն։

Իսկ 1929 թ. վերջում տեղեկություն և ցուցմանքներ սահմանագործի կողմից Խաչի և Կարմիր Մահմետի Ընկերությունների Միության գործկոմից 1930 թվի մայիսի 15-ին Դրեզդենում կայանալիք առող-



Պատահության միջադրային ցուցահանդեսի մասին, Հ. Կարմիր Խաչի Գլխավոր Վարչությունը պատրաստեց ու ուղարկեց Մոսկվա Գործկումին այդ ցուցահանդեսի համար մի շաբք կարեսր նյութեր, գիտերամաներ, լուսանկարներ և Հայաստանի քարտեզ:

Հիմնարկություն նորոգություն

Անցնելով Հ. Կարմիր Խաչի գործառներությանը յերկրում, պետք է նշել, վոր նախագահության նիստերում քննված ինդիբների մեծագույն ժաման վերտիրում և ընթացիկ վարչական կարգադրություններին։ Առաջն ընթացիկ հարցերից գուրու նախագահության նիստերի նյաթ ելին կարմում մի շարք խնդիրներ, գորոնք կազմված ելին մի կազմից Կարմիր Խաչի հիմնարկների շնոքերի նորագության և նոր հիմնարկներ բանալու հետ, և մյուս կողմից Կարմիր Խաչի նյութական բանական ուժեղացնելու և ժամանակի ընթացքում առաջացող նոր պահանջներին բափարարելու հետ։ Կարմիր Խաչի նյութական բաղան ուժեղացնելու նպաստակով նախագահության առաջարկությամբ. 1929 թվին Դիմակը Վարչության Պետությունը վորոշել և՝ 1. Բանալ Սանհիտարկությունից անունով մի խանութ, 2. Կարմակերպել Կարմիր Խաչի յեռորդակ և 3. Անցկացնել հիմնարկ-ձեռնարկների իրավական անդամականություն։ Այդ իր գորոշումների համար արգեն ստացված ե հենարան նական Գործադիր Կոմիտեի համանությունը և նրանց իրականացմանը նախագահությունը հմտնարկի 1930 թվին։

Գալուստ Հեմմորդիների չենքերին՝ 1928 թ. բնթացքում Վարչությունը վերջացրել և Սեքարի բժշկակայանի հիմնական նորոգությունը, գործիք հետո սպասառնի 1-ից բժշկակայանը վերածվել և հիմնացնողի:

Նույն թվին կարմիր իտաշը կառուցել և Յելենավկայում հիվանդանոցի նոցի նոր չենք, Հարմարեցնելով այդ նպատակի համար Գալվոսթեռմի կողմից արածագրված նախկին ամբուլատորիայի չենքը: Բացի գրանից Կարմիր իտաշի Վարչությունը 1929 թ. ամառը վերանորոգել և վերաց չափով բնդարձակել և եջմիածնի տրոսվկայանի չենքը:

1928թ. Կարմիր Խաչի Վարչությունը վերածել և հիվանդանոցի նույնպես Զանգեզուրի Միսավանի բժշկակայանը, ոգոսինով այդ նոր պատասկի համար Գավկուրծկոմի կողմից արածադրված շնչքից և իւ ձախքիրով հարմարեցնելով այդ շնչքը հիվանդանոցի համար :

Նոյեմբերի 1928 թվին Գլխավոր Վարչությունը վորոշել է անդամութել Արքայի տրամադրանը Քեչչքենգ, թողնելով Արքայում միայն բուժակայան։ Արքայի շնչքի մի մասը տրամադրված է գյուղի կողմէկտից անտեսությունների կուտառական կարգեների համար։ 1929 թվի ըն-

Թացքում Քեշիչքենդի տրոպկայանը ժամանակավորապես չեր աշխատում :

Հ. Կարմիր Խաչի շինարարական աշխատանքների մեջ առանձին տեղ է բռնում Նալբանդի բժշկակայանի խնդիրը։ Ինչպես նախորդ մեր տեղեկագրումն ել ասված եր, Լենինականի յերկրաշրթից հետո, յիշը սաստիկ վնասվել եր Հ. Կ. Խաչի Մ. Պարնիում գտնված բժշկակայանի շենքը, Վարչությունը վորոշել էր տեղափոխել այդ բժշկակայանը հույն Մըջանի Նալբանդ Գյուղը, կառուցելով դրա համար այնտեղ հատուկ նոր շենք։ 1929 թ. ընթացքում Վարչությունը բանակցություններ վարեց կասավարության հետ այդ շենքի կառուցման համար անհրաժեշտ ծախքերի մասին։ Բանակցությունների հետևանեցով՝ Լենինականի Վերաշինության Հանրապետական Կոմիտեն 1928 թ. մայիսի 28-ի իր արձանագրությամբ վորոշեց բաց թողնել Հ. Կ. Խաչին Նալբանդի բժշկակայանի շենքի կառուցման համար պահանջվելիք գումարը։ Այնուհետև սկսվեցին շենքի կառուցման աշխատանքները, վորոշ վերջացան 1929 թ. ամառը։ Սեպտեմբերի 1-ից արդեն այնտեղ բայց վաճառք է կարմիր Խաչի բժշկակայանը։

1929թ. Գլխավոր Վարչության Պլենումը ցանկանալով իր միջոցները գործադրել ավելի նպատակահարմար կերպով և ույժ տալ Կարմիր Խաչի դրածունեցության համար ներկայացող ավելի կարեոր պահանջներին բավարարելուն, վորոշեց իր ունեցած մի շարք բուժականացները հանձնել տեղական բյուջեին, այն է՝ Արտզդայանում, Տեղ դյուզում (Զանգեզուր) և Արփայանում:

## ԱԵՎԻՆԿԱՆ ՀԵԲԻ ԽԱՆԴԻՐԸ

Տաղիներից ի վեր Հ. Կարմիր Խաչի Վարչությունն առանձնապես  
մտահոգող խնդիրն եր Յերևանում սեփական շենք ունենալու խնդիրը .  
Հիրավի նախանձելի չեր մի վիճակ, յերբ Կարմիր Խաչը սափված եր  
իր ազգանքները և դեղորայքը պահել զանազան մասնավոր շենքերի  
գարձու նկուղներում . իսկ իր զրաւունյալի համար ոզավել այս կամ այն  
հիմնարկության բարեհաճ տրամադրությամբ մեղ տրված սենյակնե-  
րից, գրեթե յուրաքանչյուր տարի փոխելով նրա վայրը : 1928 թ . Հ .  
Կարմիր Խաչի Վարչությունը թե՛ անձամբ Ամերկոմի Լենինականի  
գիրեկառը միստր Բիշի և թե՛ Կարմիր Խաչի Գլխավոր Վարչություն  
Ամերկայի Ներկայացուցիչ գոբառոր Հովհաննի միջոցով դիմեց Նյու-  
Յորք Ամերկոմի Կենարոնական Վարչությանը, ինորե-  
րով տրամադրել Ամերկոմի Յերևանի շենքը Հ . Կարմիր Խաչին իր պո-  
հեստների, զրաւունյալի և մի շարք այլ կարիքների համար : Տեղի ո-  
ւեցած բանակցություններից հետո, յերբ նույն թվականի մայիսին  
Նյու-Յորքից Յերևան յեկավ Ամերկոմի լիազոր ներկայացուցիչ Աքսա-

նը, կայացով համաձայնություն այն մտքով, վոր Ամերկամբ տրամադրում է Հ. Կարմիր Խաչին առաջմ մի տարով իր շենքի ներքին հարկը և պահեստները, սպարմանով, վոր Հ. Կարմիր Խաչն իր վրա վերցնի կոտարել շենքի հիմնական նորագությունը և զրա համար պահանջած ծախքերի մի մասը, այն է՝ 2·100 ռ., իրեն շենքի վարձ, իսկ մնացած ծախքերը վճարելու յիր Ամերկոմը։ Այսուհետեւ նախահաշվիր և ուղարկելուց հետո, Հ. Կարմիր Խաչի Վարչությունն աշնանը կատարեց վերանորոգությունը, և գեկտեմբերի ընթացքում անդադիմեց այդ շենքը թե՛ իր գրասենյակը և թե՛ րուր պահեստները։

Նոր կոմոնադրությունը

Կար մի խնդիր եմ, վորը դրված լինելով գեռ նախարդ տարիներում, Գլխավոր Վարչության զբաղմունքի առարկա յիր 1928 թ. ընթացքում, — ու Կարմիր Խաչի կանոնադրության փոփոխման խնդիրն եր։ Այդ թվին Վարչության հանձնարարությունը մի հատուկ հանձնաժողով պատրաստեց նոր կանոնադրության նախագիծը, մտցներով հնի մեջ անհրաժեշտ համարված ըսլոր փոփոխությունները և լրացումները։

Հիշյալ նախագիծը Գլխավոր Վարչության հավանությունն առաջարկելով նոր կանոնադրության նախագիծը, վորը և հաստատեց այն, առաջարկելով նոր ընտրվելիք Գլխավոր Վարչության առանալ կառավարության վերջնական հաստատությունը և ապա տպագրել։ Ներկայումս կոնոնադրությունն արդեն լույս ե տեսել, նրան կցված են նաև 1. Կարմիր Խաչի և Կարմիր Մահիկի Ընկերությունների Միության կանոնադրությունը և 2. Միջազգային Կարմիր Խաչի կանոնադրությունը։

Նոր կանոնադրության մեջ մտցրած փոփոխություններից կարելուրագույնը վերաբերում է անդամավճարին։ Անդամավճարը նոր կանոնադրությունը սահմանված է 25 կոպեկից մինչև 1 ռուբի։ Իսկ Գլխավոր Վարչության Պենումը հետեւյալ կերպով է տեսակալորել այդ վճարը։ 25 կ. վճարում են Կարմիր բանակայինները, բատրակները և ուսանողները, 50 կ. վճարում են գյուղացիք և այն ծառայողները, վերոնք ստանում են մինչև 75 ռուբ. ամսական աշխատավարձ, իսկ դրանից բարձր աշխատավարձ ստացողները վճարում են 1 ռուբի։

Հ. Կարմիր Խաչի 1 համագումարը

1928 թվին վերջին և Կարելոր խնդիրը, վորը նախագահության մի շաբթ նիստերի խորհրդակցության նյութ եր կազմում, ու Հ. Կարմիր Խաչի համագումարի խնդիրն եր։ Աչքի առաջ ունենալով, վոր դա լինելու յիր Հ. Կարմիր Խաչի առաջին համագումարը համահայտնելու վերաբերյալ կազմակերպումը և մասնակիության համար կազմակերպումը լրացնելու մասսայական մասնակցության հողի վրա։ Այդ նպատակով Վարչությունը վաղորոք մշակել եր և ուղարկել իր մասնաճյուղերին մանրա մտան հարանալ Համագումարի ընտրությունները կայացնելու գավառ ներում, իսկ Յերեան քաղաքում նույն նպատակով Վարչության առանձին ջանքնով բարով խոչը հիմնարկություններին կեց կարմիր ելին հասուն քիջները, վորոնք իրենց անդամների թվի համաձայն պիտի ընտրելին և ուղարկելին իրենց պատգամավորները Համագումարին։ Համագումարի հրավիրումը Վարչությունից անկախ պատճառ ներով մի քանի անդամ հետաձգվեց, և նա կայացավ միայն 1928 թվականի 16—18-ին։

Համագումարն ունեցավ 5 նիստ, վորոնց մասնակցում ելին 91 պատգամավոր։ Երբեք պատվավոր հյուրեր համագումարին ներկա ելին և վողջունելու համար յեկած ելին։ Մոսկվայից Կարմիր Խաչի և Կարմիր Մահիկի Ընկերությունների Միության Գործադիր Կոմիտեյի ներկայացուցիչ Խան Մահամեդովը, նաև հարեան Վրաստանի, Աղբյրեջանի և Նախիջենի դաշնակից հանրապետությունների Կարմիր Խաչի և Կարմիր Մահիկի ներկայացուցիչները։

Համագումարը նախագահություն, քարտուղարություն և պատվագոր նախագահություն ընտրելուց հետո լսեց Հ. Ս. Խ. Հ. Կառավարության ներկայացուցչի և ժողովին յեկած պատգամավորների վողջույնի խոսքերը և անցավ որպարզի խնդիրներին։

Արակարգը հետեւյալ եր։

1. Խորհրդային Միության միջազգային գրությունը և Կարմիր Խաչի առաջ գրված խնդիրները։

2. Կարմիր Խաչի և Կարմիր Մահիկի Ընկերությունների Միության Գործադիր ղեկուցումը։

3. Հայաստանի Կարմիր Խաչի Գլխավոր Վարչության հաշվետող ղեկուցումը։

4. Հայաստանի Կարմիր Խաչի Փինանսական հաշվետող ղեկուցումը։

5. Հայաստանի Կարմիր Խաչի Վերատուղիչ Հանձնաժողովի ղեկուցումը։

6. Հայաստանի Կարմիր Խաչի կանոնադրության կետերի փոփոխությունն ինդիբը։

7. Մանդատային Հանձնաժողովի ղեկուցումը։

8. Բնաբությաններ Հայաստանի Կարմիր Խաչի Գլխավոր Վարչության և Վերատուղիչ Հանձնաժողովի։

Թրակարգի խնդիրների մասին նախագահության և Վերատուղիչ Հանձնաժողովի կողմից ղեկուցումները լոելուց հետո Համագումարն անցնում է մտքերի փոխանակության այդ խնդիրների չուրջը և ապա

լուրդ Նախագահության յեղբափակման խոսքն ընդունում և հետեւ յուր բանաձեռ:

«Ըստով Հ. Կարմիր Խաչի Գլխավոր Վարչության զեկուցումն իր ունեցած գործունեյության մասին, Հ. Կ. Խաչի առաջին Համագումար ը գտնում և Գլխավոր Վարչության առարծ դիմություն ճիշտ և աշխատանք-ները բավարար:

Արձանագրելով աշխատանքների ընթացքում կատարած մի չարք նվաճումները, ինչպես՝

1. Մարտրիայի գեմ պայքարի հաջող կազմակերպումը և Առժող-կոմատին հասցրած խոշոր ոժանդակությունն այլ գործում,

2. Բուժական հիմնարկների ցանցի լայն արածումը,

3. Առաջին ոգնության խմբակների ցանցի աճումը,

4. Ժողովրդական աղետների (Լենինականի յերկրաշարժի և այլն) ժամանակ արագ և հաջող կազմակերպված ոգնությունը,

5. Յերկիր վերաբարձած գաղթականներին թժչկական և նյութական դպավի ողնության կազմակերպումը և այլն,

Համագումարը միաժամանակ նշում և Գլխավոր Վարչության աշխատանքներում նկատված հետեւյալ թերությունները.

1. Աշխատանքների վոչ պլանային ընթացքը,

2. Մասսայական կազմակերպությունների թույլ սահմակցությունը Հ. Կարմիր Խաչի աշխատանքներին,

3. Գինանական կայուն բյուջեի բացակայությունը,

4. Արտասահմանյան Հ. Կարմիր Խաչերի թույլ զեկավարությունը:

Այլ թերությունները վերացնելու համար Համագումարն առաջարկում է.

1. Առանձին ուշադրություն դարձնել կազմակերպչական աշխատանքների վրա, միջոցներ ձեռք առնել ավելացնելու Հ. Կարմիր Խաչի անդամագրությունը և բջիջների թիվը, ազգաբնակության լայն խափերը մատնակից անելով Կարմիր Խաչի աշխատանքներին: Այլ աշխատանքներն ուժեղացնելու համար անհրաժեշտ գոնել Գլխավոր Վարչության մեջ ունենալ առանձին հրահանգիչ:

2. Աշխատանքները առնել ավելի պլանային և ծրագրված կերպով:

3. Միջոցներ ձեռք առնել ֆինանսական կայուն բազա ստեղծելու համար:

4. Միջոցներ ձեռք առնել ավելի լայնացնելու հիմնարկների ցանցը և բարելավելու բուժողնության վարակը և կահավորումն այլ հիմնարկներում:

5. Կանոնագրել արտասահմանի հետ յեղած կազը և դեկավարությունը:

6. Միջոցներ ձեռք առնել հասարակական, խորհրդային և պրոֆ

միութենական բոլոր կազմակերպությունները մասնակից անելու Կարմիր Խաչի աշխի աշխատանքներին:

Այսուհետեւ համագումարն անցավ որակարգի վերջին խնդրին, այն է պաշտոնատար անձանց ընտրություններին:

Գլխավոր Վարչության կազմը Համագումարը վրոշեց ընտրել 25 անդամից և 7 փոխանդամից, փոխանակ համարկին կազմի, զարդարացած եր 17 անդամից և 5 փոխանդամից:

Գլխավոր Վարչության նախագահաց Համագումարի կողմից վերջարկվեց ըժ. Ս. ԿՈՄՄԱՐԱԿԱՆԸ:

Հարմիք Խաչի գործունեյությանը  
յերկրում

Այս ընդհանուր տեսությունից հետո անցնում ենք Հ. Կարմիր Խաչի առնեցած գործունեյությանն ըստ առանձին բնագավառների:

Ինչպիսի նախարար տարիներում, ներկա հաշվեշրջանի ընթացքում են Հ. Կարմիր Խաչի գործունեյության պլանությունների գեմ: Այսուղ պես և նշել, վոր այն յերեք սոցխալական հիվանդություններին, վորոնց գեմ Հ. Կարմիր Խաչը մղում եր պայքար, Գլխավոր Վարչությունը 1928 թ. վորոշեց ավելացնել նաև տուրերկուլյուզը: Այդ թվի վերջերում նույնորդեց Կարմիր Խաչերի Գործկոմի առաջ 175.000 ուուրլի հատկացներու Հ. Կարմիր Խաչին Դիլիջանում տուրերկուլյուզով հիվանդների համար զիսպանսեր կառուցանելու նպատակով: Գումարն այլ նրանքակով հատկացվեց: Հետազայում Գլխավոր Վարչությունը վորոշեց զիսպանսերը կառուցել վոչ թե Դիլիջանում, այլ Յերևանում, աչքի առաջ ունենալով, վոր ՀՍԽՀ ժողովագործի վարոշական համարյան Դիլիջանի սանատորիումի շենքերից մեկը հանձնվում և Կարմիր Խաչին տուրերկուլյուզը հիվանդ մանուկների համար: Իսկ Յերևանում գիսպանսերի շնչը կառուցելու յերամարություններով և գիշերային մահականիներով, և այլ նպատակի համար վերաբերյալ 175.000 ուուրլուց ավելի պահանջված զումարը հատկացներու յերեւ կողմից Հայաստանի Առողջապահության ժողովրդական Կոմիտարիատը:

Սոցխալական հիվանդությունների գեմ պաքարի վերաբերյալ մահամարյան տեղեկությունները մենք կտանը մի քիչ ներքի:

Կանոնադրությամբ հախառեսված Հ. Կ. Խաչի դործունելությունը յերկու նասոպակների, այն և՝ Հայաստան յեկող գաղթականներին ողնության զալու և ժողովրդական տարերային աղետների զոհերին ողնություն ցույց տալու վերաբերմամբ մենք չենք խոսի, վորովհետեւ հաշվեառ ժամանակաշրջանում այդ ուղղությամբ աշխատելու առելի գրեթե չեն ներկայացել Հ. Կ. Խաչի Գլխավոր Վարչությանը: Պետք են հիշատակել միայն, վոր Հ. Կարմիր Խաչի Գլխի Վարչությունը զրամական ողնություն և ցույց տվել Խրիմի յերկրաշարժի աղետայներին, փոխազբելով այդ նպատակով Ռուսաստանի Կարմիր Խաչին 500 ո. և Քութայիսի Հրկիւլյաներին ուղարկելով Խրանց Համար Վրաստանի Կարմիր Խաչին 500 ռուբլի գրամմով և 60 Հատ վերմակ: Բացի գրանից, Համաճարակային Հիվանդություններից քութեշի բոնկման Ժամանակ 1928 թ. Հ. Կ. Խաչի Գլխի Վարչությունը հատուկ բժշկական խումբ և ուղարկել Նախարարությամբ, վորոր մնացել և այնտեղ մեկ ամիս, պայքարելով այդ համաճարակի գեմ ձեռք-ձեռքի տված Առաջնումատի ուղարկած խմբի հետ: Միենույն ժամանակ Վարչության Կարգադրությամբ Սեփարի Հիվանդանոցը նույնպես տրամադրված եր քութեշի գեմ պայքարելու նպատակով: Յերեանում ել նույն թվին Կարմիր Խաչը նույն նպատակով տրամադրել եր Առաժնին 100 վերժակ: Զանգեզուրի վերաբերմամբ 1928 թվին Վարչությունը կարգադրել եր ուղարկել մեծ քանակությամբ Հակաքությային շիջուկ և պայքարի գործի Համար տրամադրել եր Սիսավանի Հիվանդանոցի բժշկ: Կազմը: Իսկ 1929 թ. նոյեմբերին Հ. Կ. Խաչը Համաճայնությունը զալու Առժողկոմատի հետ, ուղարկեց Զանգեզուրի ըրջանն առանձին բժշկական խումբ, ժամանակարելով նրան բոլոր անհրաժեշտ պիտույքները և գեղարայքը և տրամադրելով խմբի կարիքների համար Սիսավանի Հիվանդանոցը: Այդ խմբի աշխատանքները տեղիցին մինչեւ 1930 թ. փետրվարի մեկը:

Սայրության և մանկության պահուանությունը

Ինչ վերաբերում է ժայռության և մանկության պաշտպանությունը խնդրին, պետք են ասել, վոր այդ ասպարիզում ևս Հ. Կարմիր Խաչը շատ քիչ գործունելություն և ցույց տվել: Գլխավոր Վարչությունն այդ խորի շուրջը կազմել եր մի ընդարձակ ծրագիր նոր ձեռնարկների, վորի իրագործումը սակայն տրամադրելիք նյութական միջոցներ չունենալու պատճառով, ժամանակավորապես հետաձգել եր, և նրան իրագործմանը Վարչությունը կանցնի առաջիկա 1930 թվին:



Մայրության պաշտպանության ասպարիգում պետք է նշել, վարչ. կարմիր Խաչի Գլխավոր Վարչությունն իր մի քանի հիմնարկներում 1928 թ. բացել է մանկարարձական բաժանմունքներ, իսկ այն հիմնարկներում, ուր այդպիսի բաժանմունքներ զոյլություն չունեն, չանակել է առանձին մանկարարձունիքներ:

Մանկության պաշտպանության դժով Գլխավոր Վարչությունը 1929 թվին բացել է Յ մանկական հրապարակ, վորոնցից մեկը՝ Դիլի. Հանում, մյուսը՝ Նոր-Յեփոկիայում և յերրորդը՝ Թյուրքմենիլիում: Ըստ բացիկ 1930 թ. ծրագրվուծ է բանալ կրկին 10 մանկական հրապարակ: Ներ: 1930 թ. նույնպես Վարչությունը վարույթ է բանալ Յ մանկական մասունքներ: 1929 թվին Լուսժողկոմատի կողմից կոլխոզներին կից կադակերպիած մանկարարտեղների համար կարմիր Խաչը պատրաստել է 20 հատ գեղատուվիեր:

Գիտներին առողջուրյան սպասարկում

Այսուհեղ առանձնապես պետք է կանգ առնել պիտուներին առողջության սպասարկման համար Գլխավոր Վարչության ձեռնարկած միջացների վրա և ինչպես և նախորդ 1927 թվին Գլխավոր Վարչությունը 1928 և 1929 թ. թ. ամառվա ընթացքում իր վրա յեր վերցրել պիտուների կանոնադրությունը: Ամամբարը առաջարկությունը և բաղկացած եր 800 յերկան յերեխաներից: Կարմիր Խաչը նշանակել էր իր հաշվով հատուկ բժիշկ, վորու հոկում եր յերեխաների առողջապահության պայմաններին: Կարմիր Խաչը տալիս եր նաև ճամբարի համար պահունչ զան զեղորույքը: 1928 թվի ոգոստոսի 15-ից Հ. Կարմիր Խաչը բացել է Յերեանում առանձին կարինետ պիտուներին առողջության սպասարկման համար մասնագետ բժշկի զեկավարությամբ: Կարինետը գտնվում է Կենտրոնական Պիտուներական Տանը: Այդ պիտուներական կայանի հիմնական աշխատանքը սանիտարական աշխատանքն է: Կարինետի մի տարվա ըստը ունենալության ընթացքում պատրաստված են 200 սանիտար պիտուներներ: Կան 7 սանիտարական խմբակներ, վորոնց հետ առարկում են կանոնավոր զրույցներ, գործնական աշխատանքներ և ամբողջատրիաների այցելություն: Խմբակներն ունեն իրենց պատիրադիրներ:

Մարդաչափական կարինետում առաջի յե ունենում պիտուների բժշկական քննություն: Կատարվում է նույնպես նրանց ընակարանների քննություն, ինչպես և ուսումնասիրվում են նրանց կենցաղի վերաբերյալ խնդիրները: Կարմիր Խաչը սպասարկութիւնը այս կամ այն ձևով առաջարկու պիտուների թիվը հասնում է 6.000-ի:

Յերեանից դուրս Կարմիր Խաչը 1929 թվին տվել է Ստեփանա-

վանի պիտուներական վայրին պիտուներների մեջ տարածված զանազան վարակիչ հիվանդությունների դեմ պայքարելու համար ամեն տեսակ դեղորայք: Ոգնության գործը կազմակերպելու համար այնտեղ գործուղիքը է պիտուներին և պահանձնությունների բժիշկը, վորը բժշկական քննության և յնթարկել պիտուներական այդ վայրի ամբողջ բնակչությունը (500 հոգի):

Բացի դրանից Կարմիր Խաչը 1929 թվին տվել է 15 գեղասոսուփեր պիտուներական բբիկաղներին կոլտնտեսությունների համար: Կարմիր Խաչը նույնպես նյութական ողնություն և ցույց տվել 1928—1929 թ. թ. Յերեանի կոնսուլտացիայի Սոցիալական Ոգնության հորժություն:

Գալով Հ. Կ. Խաչի Մանկատան խնդրին, Գլխավոր Վարչությունը գտներով, վոր մանկատան սաների ահապին մեծամասնությունն արգեն մեծահասակ են դարձել և մյուս կողմից նպատակ ունենալով յնքն ողմակործել իր ծրագրած բժշկական քույրերի դպրոցի կարիքների համար, 1928 թ. վորոշեց սաների մեծագույն մասը տեղավորել աշխատանքի համար այլ և այլ գործարաններում, գլխավորապես Լենինականի Տեքստիլ գործարանում, իսկ մասցած սակալվաթիվ փոքրահասակ յերեխաներին հանձնել կուստողկոմատի մանկատաներին: Այսպիսով այդ թիվ վերջին Հ. Կ. Խաչի մանկատունը դադարեց գոյություն ունենալուց:

Պայտար սանիտարական անգրագիտա-  
րյան դեմ, առաջին ոգնության  
խմբակներ

